Արարատյան երկրում Շահկուլի սուլթանի իշխանության ժամանակի մասին աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան։ Հայտնի է սակայն, որ 1558 թ., երբ ապագա սուլթան Սելիմ II-ի եղբայր Բայազիդը գահակալական պայքարում պարտություն կրելով, Էրզրումի վրայով անցավ Երևան, նրան ընդունողն ու ապաստան տվողը Շահկուլի սուլթանն էր[22]։ Ժամանակագրական հաջորդ տեղեկությունը Շահկուլի սուլթանի մասին վերաբերում է 1567 թ.։ Հասան-բեկ Ռումլուի և թուրք ժամանակագիր Մուստաֆա էֆենդի Սելանիկիի հաղորդմամբ՝ Շահկուլի սուլթանն այդ թվականին մեծ պատվիրակության գլուխն անցած մեկնում է սուլթան Սելիմ II-ի մոտ՝ շահ Թահմասպի անունից շնորհավորելու նրա գահակալությունն ու եվրոպական մայրցամաքում տարած հաղթանակները[23]։

Ըստ նույն աղբյուրների, 1576 թ. վերջերին արդեն, սուլթան Մուրադ III-ի մոտ ուղարկված պատվիրակությունը, որպես Զուլխուր-Սա'դի բեկլարբեկի, գլխավորում էր Շահկուլի սուլթանի որդին՝ Մուհամմադի խան Թոխմախ Ուսթաջլուն[24]։ Հավանաբար հոր մահից անմիջապես հետո բեկլարբեկության իրավունքը ժառանգաբար փոխանցվել էր որդուն։

Մուհամմադի խանի այս բանագնացությունը կարճ տևեց։ Պոլիս ժամանելու 16-րդ օրը առնելով շահ Թահմասպի մահվան լուրը, նա ստիպված եղավ ընդհատել բանակցություններն ու շտապ գնալ Ղազվին՝ ներկայանալու հոր գահը ժառանգած շահ Իսմայիլ II-ին[25]։

Ենթարկվելով որոշ բանսարկությունների, որ հրահրում էին ուսթաջլուների թշնամիները, նորընծա շահը նախապես որոշում է Զուլխուր-Սա'դի բեկլարբեկությունը վերցնել Մուհամմադի խանից և տալ նրա հորեղբոր որդուն՝ Աբութուրաբ սուլթանին։ Սակայն թաքալուների դեմ նույն օրերին սկսված հալածանքների ժամանակ շահը նորից ստիպված է լինում փոխել իր վերաբերմունքը և վերահաստատել նրան նույն պաշտոնում, իսկ Աբութուրաբ սուլթանին տալ Շիրվանի վիլայեթը[26]։ Մուհամմադի խան Թոխմախին հանձնարարվում է նաև վեզիր Միրզա-Շուքրուլլայի, թագաժառանգ Իբրահիմ-Միրզայի և Միրզա-Ալի սուլթան Կաջարի հետ միասին կատարել Բարձրա-

---

22 Թազքարե-յե շահ Թահմասպ, էջ 75։ Սևանի Առաքելոց վանքի քանդակազարդ դռան արձանագրության թվականի սխալ վերծանության հետևանքով Շահխաթունյանցն ու Ալիշանը 1557 թ. Երևանում հիշում են ոմն Յաղուբ-բեկ։ Նրանք արձանագրության «ՉՀԱ ԹՎԿՆԻ ԼԵ ԹԻ ԱԻԵԼԻ» հատվածը վերծանում են՝ 971+35+551=1557 (Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Վաղարշապատ, 1842, էջ 213, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300)։ Իրավացի են սակայն հետագայի վերծանողները, որոնք այդ հատվածը կարդում են «Ջ Հա[յոց] Թ[ա]կ[ա]նի ԼԵ թիւ աւելի», այսինքն՝ 900+35+351=1486 (Գ. Հովսեփյան, Սևանա Առաքելոց վանքի հարավային դուռը «Անահիտ» Նոր շրջան, Գ տարի, № 5—6, 1932, Ե. Մուշեղյան, Հայերեն արձանագրությամբ առարկաներ, Երևան, 1964, էջ 64)։ Այդ թվականը համապատասխանում է արձանագրության մեջ հիշված Աղկոյունլու Յաղուբ-բեկի իշխանության տարիներին։ Այն հաստատվում է նաև արձանագրության «յաթոռակալութեան տեառն Սարգսի» հատվածով։

23 Հասան-բեկ Ռումլու, էջ 440, հմմտ. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (այսուհետև՝ «Թուրքական աղբյուրները»), կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. II, Երևան, 1964, էջ 117։

24 Նույն տեղում, էջ 118, տե՛ս նաև, Հասան-բեկ Ռումլու, էջ 483, Իսքանդար Մունշի, հ. I, էջ 139—204։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 204, 216—217։